

# ԴՀՈԼ

## հայկական հարվածային երաժշտական գործիք



Դհոլը (թմբուկ՝ drum) հայկական հարվածային երաժշտական գործիք է: Պատկանում է երկկողմանի թմբուկի ընտանիքին, որն ունի գլանի ձև և ծածկված է մեկ կամ երկու թաղանթներով: Նախկինում հայերը դհոլն օգտագործել են ռազմական արշավներից առաջ, իսկ ներկայումս կիրառվում է անսամբլներում՝ գուռնաների հետ և ուղեկցվում է պարերով:



Դհոլի առաջացումը կապված է Հայաստանի պատմության հեթանոսական շրջանին: Սակայն այս երաժշտական գործիքը դեռևս կիրառվում է Հայկական եկեղեցում:

Դհոլ նվագելու համար անհրաժեշտ է 2 փայտե ձողեր (հաստ՝ կոպալ, բարակ՝ ճիպոտ)՝ պատրաստված բամբուկից կամ եղեգից: Ձայնը դուրս է գալիս դհոլին այդ

ձողերի հարվածից կամ էլ դհոլին ձեռքի ավերի, մատերի հարվածներից (վերջինս առավել հայտնի է):